ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Հակոբյանը, Մեխակ Մեխակյանը, Էդիկ Տիգրանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Հունան Ռուբենյան, Միհրան Մելքումյան, Սերոբ Միքայելյան, Մարոզ Սարիբեկյան, Սիլվա Գրիգորյան, Պապին Վարդանյան, Հասմիկ Մելքումյան, Լուսինե Զոբանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր ՝ Սիլվա Գրիգորյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի համայնքի ավագանին որոշում է ՝
Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայքի ավագանու 2021 թվականի հունվարի 20-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N65-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ N 59-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3. Ակունք համայնքի ավագանու 2021 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը հաստաատելու մասին
4. Հաղորդում համայնքի 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ
5. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից
Համայնքի ավագանու անդամներ
Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է: /կցվում է որոշում N 01/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N65-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին *որոշում է* '

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «Ակունք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 65-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵԲՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ N 59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է '

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Ակունք համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 59-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03-Ա/

Լսեցին

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՂ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի, համայնքի ավագանին որոշում է '

1.Հաստատել Ակունք համայնքի ավագանու 2021 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելվածի'

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04/

Լսեցին

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի ավագանին՝ որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 05/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով հողերի սեփականատերերի կողմից ներկայացված հայտերը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 06/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Սիլվա Գրիգորյանը